ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԹԻՎ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
05.05.2023Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 26 անդամները, բացակայում է ***Սահակ Բաղդասարյանը:***

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի տեղակալներ Ս.Վարդանյանը, Գ.Գրիգորյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը, Ս.Բալաբեկյանը , Բ. Բալբաբյանը և Ա.Ծերունյանը:

Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար Հ. Շահգալդյանը:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Ձեզ եմ ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի թիվ 4 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2017 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 63 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
2. Չարենցավան համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
3. Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով ՀՀ համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին:
4. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:
5. Քաղաքացու անվամբ գրանցված 07-015-0134-0031 կադաստրային ծածկագրով 0,03571 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
6. Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
7. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու մասին:

8. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 5-րդ հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցերի վերաբերյալ:

Կողմ-16 դեմ - 0 ձեռնպահ -10

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1 Չարենցավան համայնքի 2017 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 63 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի 2017 թվականի նոյեմբերի 20-ի ««Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ալափարսի, Արզականի, Բջնիի, Կարենիսի, Ֆանտանի գյուղապետարանների աշխատակազմերի գործունեությունները դադարեցնելու մասին» թիվ 63 որոշման 2-րդ կետով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և գործողության մեջ է դրվում իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից կանոնադրությունը հաշվառելու պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 26 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Չարենցավան համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

/Զեկ.Ա.Ծերունյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետով և 82.1-րդ հոդվածով՝ ***առաջարկում եմ.***

1. Հաստատել Չարենցավան համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու համայնքի զարգացման ռազմավարության և ծրագրերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Ավագանու անդամ Արթուր Գալստյանը հարցեր հնչեցրեց փոսային և համատարած ասֆալտապատման, ինչպես նաև Արզական գյուղի լուսավորման լեդ լամպերի վերաբերյալ:

Զեկուցող Աշոտ Ծերունյանը պարզաբանումներ արեց նշված հարցեր շուրջ:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 16 դեմ-0 ձեռնպահ-10

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով ՀՀ համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին:

/Զեկ.Ա.Ծերունյան/

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, ***առաջարկում եմ.***

1. Համաձայնություն տալ Չարենցավան համայնքի մասնակցությանը «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով ՀՀ համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին:
2. Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Չարենցավան համայնքի 2023թ. բյուջեից կատարել համապատասխան համաներդրումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու համայնքի զարգացման ռազմավարության և ծրագրերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:

/Զեկ. Ս.Վարդանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով , 77-րդ հոդվածով և համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի թիվ 49 որոշման, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացու դիմումի:

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ՀԱՍՑԵՆ	ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Է ՀԱՏԿԱՑՎՈՒՄ	ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ
1.	Մուսինյան Գագիկ	4-20-40	11 800 000	Սեփականություն	Անհատույց

2.Համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարվելիք փոփոխությունները ներկայացնել օտարման գործընթացն ավարտելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Քաղաքացու անվամբ գրանցված 07-015-0134-0031 կադաստրային ծածկագրով 0,03571 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով, նկատի ունենալով, որ հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ համայնքային սեփականություն հանդիսացող 07-015-0134-0031 կադաստրային ծածկագրով 0,03571 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքը սխալմամբ գրանցվել է որպես քաղաքացու սեփականություն.***առաջարկում եմ.***

1. Հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ սխալմամբ որպես քաղաքացու սեփականություն գրանցված 07-015-0134-0031 կադաստրային ծածկագրով 0,03571 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքը ճանաչել Չարենցավան համայնքի սեփականությունը /կից ներկայացվում է հողամասի հատակագիծը/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-23 **դեմ-1** **ձեռնպահ-2**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6 Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 64-րդ կետի դրույթներով և հինք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.04.2023թ. թիվ 100 եզրակացությունը. ***առաջարկում եմ.***

1. Քաղաքացու սեփականություն հանդիսացող 07-037-0203-0017 կադաստրայն ծածկագրով 0.1 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքի նպատակային նշանակությունը համարել փոխված **որպես բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողեր:**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Կողմ-23 **դեմ-0** **ձեռնպահ-3**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:
Լսեցին.

7. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու՝ համաձայն հավելվածի /կցվում է/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Երկար քննարկումներից հետո, առաջարկվեց Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող աճուրդային կարգով օտարելու ներկայացված՝ հողատարածքները, դնել քվեարկության առանձին-առանձին: Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում հավելվածի 1-ին կետում ներկայացված հողատարածքը, հասցե՝ համայնք Չարենցավան, ք.Չարենցավան, փողոց Մելտոնյան 2/3 , /ծածկագիր՝ 07-007-0019-0012/

Կողմ- 24 դեմ-2 ձեռնպահ-0

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում 2-րդ կետում ներկայացված հողատարածքը, հասցե՝ համայնք Չարենցավան գ.Արզական, Բջնիի խճուղի թիվ 58, /ծածկագիր՝ 07-015-0136-0027/

Կողմ-16 դեմ-2 ձեռնպահ-8

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում հավելվածի 3-րդ կետում ներկայացված հողատարածքը, հասցե՝ համայնք
համայնք Չարենցավան գ. Բջնի, փողոց 11-րդ թիվ 19/2, / ծածկագիր՝ 07-019-0043-0001/

Կողմ-14 դեմ-10 ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

8. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 5-րդ հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

/Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով .***առաջարկում եմ.***

1. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 5-րդ հերթական նիստի օր և ժամը սահմանել 2023 թվականի հունիսի 02-ը, ժամը 12:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Չարենցավան համայնքի ավագանու անդամներ՝

Առաքելյան Նորայր
Բաբայան Արայիկ
Գասպարյան Մելիք
Գևորգյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն
Եփրեմյան Տարոն
Խլղաթյան Արսեն
Մակինյան Վարդան
Շահգալդյան Հակոբ
Վարդանյան Նորայր
Վարդանյան Սարգիս
Վարդանյան Սևակ
Պողոսյան Մնացական
Խեչոյան Անահիտ
Պապոյան Դավիթ
Բաբայան Նարեկ
Բալյան Աննա
Գալստյան Արթուր
Թադևոսյան Նունե
Խաչատրյան Արշակ
Հարոյան Լիլիթ
Սահակյան Գառնիկ
Վարդանյան Նորիկ
Ղամբարյան Գարիկ
Պալյան Գարիկ

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**